

Յատուկ «Չարթոնք»ի
Հարցազրույց

«Մեր Ժողովուրդի Յոյսն ու Ապագան իր Գիտակից, Չարգացած Ու Արիեստագիտութեան Լաւապէս Տիրապետած Հայ Երիտասարդութիւնն Է». Դոկտ. Երուանդ Չօրեան



Դոկտ. Երուանդ Չօրեան



Չրոյցը վարեց՝ ՍԵՒԱԿ ՅԱԿՈԲԵԱՆ

Հայրենիքի կարողութիւններուն եւ տնտեսութեան մասին ոչ միշտ դրական արտայայտութիւններէ ու տեղի անտեղի գանգատներէ հեռու, Երեւանի Արշակունեաց փողոցի 41 թիւին հանդարտ շրջափակով կառոյցին մէջ Սինոփսիս Արմինիա (Synopsys Armenia) ընկերութեան մէջ, անոր նախագահ եւ գլխաւոր ճարտարագետ՝ Դոկտ. Երուանդ Չօրեանին հետ հանդիպումս Հայաստան իմ վերջին այցելութեանս, Հայրենիքի եւ անոր երիտասարդութեան հանդէպ ունեցած հաստքս աւելի եւս ամրացաւ:

Սինոփսիս Արմինիա ընկերութիւն այցելութիւնս առիթ մը էր ինծի Դոկտ. Չօրեանի ազնիւ ընկերակցութեամբ շրջելու անոր զանազան բաժանմունքները ու ծանօթանալու այս հաստատութեան Հայրենիքի մէջ տարած անզուգական գործին:

Դոկտ. Չօրեանի հետ հանդիպումս նաեւ առիթ մըն էր ծանօթանալու իր ազնիւ անձին, որ արիեստագիտական աշխարհի եւ Հայրենիքի մէջ իր անզուգական ներդրումին կողքին, արժանաւոր անդամն է Հայկական Բարեգործական Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովին, «Չարթոնք»ի շնորհեց հետեւեալ յատուկ հարցազրույցը:

Ս. Յ. - Դոկտ. Չօրեան, հարցազրույցը սկսելու համար հաճելի պիտի ըլլայ մեր ընթերցողներուն ծանօթացնել ձեր ազնիւ անձն ու հայկական իրականութենէ ներս ձեր տարած կարեւոր գործունէութիւնները:

Ե. Չ. - Ես ծնունդով հալեպահայ եմ: Շրջանաւարտ եմ Բ.Բ.Մ.Ս.Ս. Լ.Նաճարեան- Գ. Կիւլպէնկե-

ան Երկրորդական վարժարանէն, որու հիմնադիրներէն էին երկու մեծ հայրերս եւ հայրս: Այդ իսկ պատճառով ազգային կեանքի բոլոր հանգրուանները իրենց բնականոն ընթացքով անցած եմ, հասնելով ուսման եւ մասնագիտացման որոշ աստիճանի:

Միշտ Հայրենիքը գերադասելով, կեանքիս ընթացքին ամէն ջանք ի գործ դրած եմ Հայաստանի բարգաւաճման նպաստող նախաձեռնութիւններ կազմակերպելով, որոնց գլուխ գործոցը հանդիսացաւ քսան տարիներ առաջ ԱՄՆ Միլիքօն Վելիի մէջ ԲԸՄ-ի մասնաճիւղ մը հիմնելը, որ երկու նպատակ կը հետապնդէր. առաջինը՝ արիեստագիտական աշխարհի կեդրոն հանդիսացող այդ վայրէն սատարել Հայաստանէն ներս Նորարարութիւն զարգացնելու, իսկ երկրորդը՝ սփիւռքի մէջ հայապահպանման աւելի եւս զարկ տալու Նոր Ժամանակներու ընձեռած միջոցներով:

Այս նպատակներուն, որպէս իրականացում 2006 թուականին հիմը դրուեցաւ ԲԸՄ-ի Armenian Virtual College-ին, որ հեռավար ուսումնառութեան Նուիրուած ուսումնարան մըն է: Այս ձեւով փորձեցինք արդի միջոցներով կիրարկել համացանցային ուսումնառութեան ծրագիր մը՝ հայկական ոճով ու բովանդակութեամբ անշուշտ: 2009-ին այս ծրագիրը արդէն հանրութեան տրամադրութեան տակ էր:

Ներկայիս ունինք ուսանողներու երեք խումբեր: Առաջինը՝ անհատ ուսանողներն են, որոնք իրենց նախասիրած վայրէն կրնան հետեւիլ մեր եռամսեայ ծրագիրներուն, որ կ'ընդգրկէ՝ Հայերոց լեզու, հայոց պատմութիւն եւ մշակոյթ: Անհատ ուսանողներուն թիւը այսօր կը հաշուէ մօտաւորապէս 6000, որոնց մեծամասնութիւնը կու գան Ա.Մ.Ն.-էն եւ 74 այլ երկիրներէն, մինչեւ իսկ Ափրիկէէն:

Երկրորդը՝ աշխարհատարած դպրոցներն են: Նկատի ունենալով, որ Սփիւռքի հայկական իրականութեան մէջ այսօր գրեթէ ամէն տեղ ունինք մարդուժի պակաս, ուր շատ յաճախ դասագիրքերն ալ անմատչելի են, կապեր հաստատած ենք քսան տարբեր երկիրներու դպրոցներու հետ, Պուէնոս Այրեսէն, Մոնթրէալէն, Երուսաղէմէն, Տուպայէն, Մոնթե Վիտոյէն եւ աշխարհի տարբեր երկիրներէն, որոնք առիթը կ'ունենան եռամսեայ դրութեամբ ծանօթանալու մէկգմէկու մշակոյթին, սովորութիւններուն եւ այլ արտադպրոցական աշխատանքներուն, բոլորը հեռակայ (online) եւ virtual կերպով:

Ամենահետաքրքրականը այս դպրոցներու ցանցի միացումն է Հայաստանի դպրոցներուն, մշակութային կոթողներուն եւ ազգային կեդրոններուն հետ: Այստեղ կարելի է արձանագրել թէ՛ ժամանակի եւ գաղութներու նօսրացումի պատճառով կարիքը չկայ մտահոգուելու թէ սփիւռքի դասական դպրոցներուն թիւի կը նուազի: Նուազումին կու գան փոխարինելու արդի միջոցներու ընձեռած կարելիութիւնները, որոնք հայագիտական զանազան գիտելիքներ կրնան փոխանցել հայկականութեամբ հետաքրքրուող ամէն անձի՝ նեռարեալ՝ ո՛չ Հայերու:

Երրորդը՝ էլեկտրոնային գիրքերու (E-Books) նախաձեռնութիւնն է՝ էլեկտրոնային գիրքերը բացառիկ առիթ կ'ընծայեն առցանց անհատին փափաքած գիրքը իր փափաքած վայրին մէջ կարդալու, դիտելու, ունկնդրելու, զարգանալու եւ անոնցմէ օգտուելու: Մեր առաջին գիրքը պատմական Հայաստանի չորս հազար տարուան պատմութիւնը կը ներկայացնէ շատ ուշագրաւ պատկերներով, վիտէօներով եւ շարժուն քարտէսներով: Արդէն քսան հազար ընթերցող ունեցած ենք մինչեւ այսօր: Այս աշխատանքը պատրաստուած է եօթ լեզուներով, Նոյնիսկ թրքերէնով: Երկրորդ էլեկտրոնային գիրքի թեման ներկայ Երեւանն ու շրջակայքն է՝ իր պատմութեամբ, մշակոյթով, բնութեամբ, տեսարժան վայրերով, թանգարաններով եւ հարստութիւններով: Մեր երրորդ էլեկտրոնային գիրքը, որուն պատրաստութեան աշխատանքները ընթացքի մէջ են «Հայերը Եւրոպայի Մէջ» խորագիրը կը կրէ ու կը ներկայացնէ Եւրոպայի մէջ մեր դարաւոր ներկայութիւնը: Ներկայիս ունինք նաեւ ճատրակի

առցանց ծրագիրներ, որոնց միջոցով տարբեր երկիրներու մարզիկներ իրարու հետ կը խաղան եւ մարզումներ կը կատարեն:

Ս. Յ.- Իսկ ո՞վ կը ֆինանսաւորէ պետական պիւտճէի կարօտող այս հսկայ նախաձեռնութիւնները:

Ե. 2.- Նախաձեռնութեան առաջին իսկ օրէն, հիմնական ֆինանսաւորումը կը ստանանք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութենէն, որուն մեծապէս երախտապարտ ենք: Ելեկտրոնային մեր վերջին գիրքի մեկենասը Կիւլպէնկեան Հաստատութիւնն է, նաեւ ունինք այլ նուիրատուներ, որոնք իրենց մասնակցութիւնը կը բերեն նման ազգօգուտ գործունեութեան ծաւալման: Տեղին է հոս նշել, որ մենք աշխարհի ծայրագոյն մասերէն ընթերցողներ եւ ուսանողներ ունինք, որոնց 56 տոկոսը այնպիսի երկիրներէ ու քաղաքներէ են, ուր ո՛չ հայկական դպրոց կայ, ո՛չ եկեղեցի եւ ո՛չ ալ ակումբ, ինչպէս՝ Ճոհանսալըրկ Շանկհայ, Քարաքաս, Թոքիօ, որոնք սակայն մեծ սեր ունին հայ լեզուին, մշակոյթին եւ պատմութեան հանդէպ եւ աշխոյժ հետեւորդ են մեր բոլոր ծրագիրներուն: Այս փաստը մեզի համար մեծ յաղթանակ կը նկատուի եւ հոգեկան ու ազգային ոգիի ու առաքելութեան բաւարարութիւն կը պատճառէ մեր նուիրատուներուն ու հովանաւորներուն:



Սամուէլ Շուքուրեան - Սինոփսիս Արմինիայի Աւագ Կառավարիչ - Ետին իր անունով գիտական յղացումներու վկայագիրները

Ս. Յ.- Այժմ ծանօթանալը Սինոփսիս (Synopsis) ընկերութեան: Ո՞րն է իր աշխատանքային գործելադաշտը եւ ի՞նչ ներդրում կը բերէ Հայ երիտասարդ սերունդի ապագային եւ Հայրենի տնտեսութեան մէջ:

Ե. 2.- Սինոփսիս արհեստագիտական ամերիկեան ընկերութիւն մըն է, որուն կեդրոնատեղին կը գտնուի Սիլիքոն Վելիի մէջ: Սինոփսիս ունի աշխարհատարած իր գիտա-հետազօտական մասնաճիւղերը 36 տարբեր երկիրներու մէջ:

Երեսունամեայ պատմութիւն ունեցող Սինոփսիս ընկերութիւնը իր մէջ ներառելով չորս տեսակի նորարարական տարբեր ընկերութիւններ, քսաներկու տարիներէ ի վեր կը գործէ վերանկախացած մեր Հայրենիքին մէջ, իր մասնաճիւղերով: Մեր ընկերութեան նպատակը հիմնականին մէջ ելեկտրոնիք chip-երու կանխագծման ծրագիրներ արտադրելն է: Հայաստանի մասնաճիւղին մէջ այս ընկերու համար արհեստագիտութեան բնագաւառին մէջ սերունդ պէտք է պատրաստենք համագործակցելով Հայաստանի տարբեր համալսարաններու հետ զանազան նիւթերու մէջ մասնագիտացող ուսանողներու ուղղութիւն տալով, որպէսզի անոնք ճիշդ հունի մէջ դնեն իրենց ուսման ընթացքը:

1993-94-ին Հայաստանի մէջ անձնապէս մեծ աշխատանք տարինք, որպէսզի Զալիֆորնիայէն դուրս եթէ արհեստագիտական բնագաւառի (IT)

մասնաճիւղեր պիտի հիմնուին իրենց սեւերակէտը Հայաստանը ըլլայ: Այժմ այս բնագաւառէն ներս Հայրենիքի մէջ 450 ընկերութիւններ կը գործեն, որոնց 75-ը վերջին երկու տարիներուն հիմնուեցան: Նշեալ ընկերութիւններէն 20-ը ունին մօտաւորապէս հարիւր երկու հարիւր պաշտօնէաներ, իսկ մնացեալ ընկերութիւնները ունին հարիւրէն նուազ պաշտօնէայ: Ի բաղդատութիւն միւս ընկերութիւններուն, Սինոփսիսի ներկայի պաշտօնէաներու թիւը 800 հոգի է, բաժնուած երեք մասնաշէնքերու մէջ: Ի միջի այլոց այստեղ պէտք է հաստատել, որ ներկայիս Հայաստանի տարածքին ընդհանրապէս արհեստագիտական արտադրութեան բնագաւառին մէջ կ'աշխատին 15.000 մասնագէտներ, որոնց մեծամասնութիւնը Երեւանի մէջ են, իսկ որոշ տոկոս մը Կիւմրիի մէջ:

Կ'ուզեմ շեշտել, որ Հայաստանի մէջ Սինոփսիսը իր մայր կեդրոնէն՝ Զալիֆորնիայէն դուրս ամենամեծ տարածութեամբ մասնաճիւղն է եւ իր յաջողակ արտադրութիւններով որպէս օրինակ կը ծառայէ ու ոչինչով կը զիջի Չինաստանի, Յնկաստանի եւ զարգացած ուրիշ այլ երկրի մէջ մեր մասնաճիւղերուն: Առ այդ, մենք հպարտ ենք եւ ամեն ջանք կը թափենք, որպէսզի արդարացնենք մեզի վստահուած առաքելութիւնը՝ Հայրենիքի եւ Հայրենի ժողովուրդին ընկերային եւ տնտեսական փայլուն ապագային սատարող կարեւորագոյն ազդակներէն է:

Ս. Յ.- Ինչպէ՞ս է համագործակցութիւնը Սինոփսիսի եւ Հայրենի համալսարաններու միջեւ:

Ե. 2.- Մենք չորս համալսարաններու հետ համաձայնութիւն գոյացուցած ենք, որոնք են՝ Բազմարուեստից համալսարանը, Երեւանի Պետական Համալսարանը, Երոպական համալսարանը եւ Սլաւոնական համալսարանը որպէսզի Մաքիստրոսի աստիճանի ուսանողները մեր մօտ իրենց գիտելիքները օրը օրին թարմացնեն աւելի արագ եւ հեշտ կերպով:

Օրինակ Բազմարուեստից համալսարանին հետ յատուկ պայմանաւորութիւններու ունինք եւ ուսանողներու օգտակար դառնալու առումով եւ ուսուցիչներ պատրաստելու հեռանկարով, զանոնք մինչեւ դոկտորական աստիճանին հասցնելով:

Համալսարաններէն զատ, աշխատանք կը տանինք բարձրագոյն վարժարաններու հետ: Ներկայիս հայրենի հինգ բարձրագոյն վարժարաններու մէջ (High School) ծանուցողական եւ դաստիարակչական աշխատանք կը տանինք, որպէսզի արհեստագիտական նիւթերը աւելի լայն տարածուին: Նոյնիսկ մրցաշարքեր տեղի կ'ունենան 10, 11 եւ 12րդ կարգի աշակերտութեան յատուկ, անոնց մտքերուն մէջ դրոշմելու արդի նորարարական մեթոտներով կամ այդ դաշտին մէջ շարունակելու իրենց ուսման ճանապարհը, գիտելիքներու եւ ընդհանուր զարգացման հիմքերու վրայ խարսխուած: Ամենակարեւոր ազդակը այստեղ այն է, որ կիրարկուածը ամերիկեան չափանիշերով համադրուած ծրագիրներ են, ուր ոչ մէկ տարբերութիւն կայ Զալիֆորնիոյ կամ Հայաստանի ուսանողին միջեւ: Ուսանողը ինչպէս Սիւրբաբալ Նահանգներու պարագային է, այստեղ չէ սահմանափակուած որոշ ուղղութեամբ մը, այլ անոր հորիզոնը ընդարձակ է եւ իր տեսադաշտը կ'ընդգրկէ ամեն տեսակի



Սինոփսիս Արմինիայի իւրաքանչիւր ժողովարարի ունի իր Հայկական անունը

արդի միջոցներ:

Ս. Յ.- Ինչպէ՞ս է Հայրենի պետութեան վերաբերմունքը Սինոփսիսի նկատմամբ, կամ ինչպէ՞ս արհեստագիտութիւնը կը քաջալերուի այստեղ:

Ե. 2.- 90-ականներուն Հայաստանի կառավարութիւնը ոչ մէկ միջամտութիւն ըրաւ մեր աշխատանքներուն, ո՛չ դրական եւ ո՛չ ժխտական, սակայն վերջին շրջանին օրէնք մը հաստատեց, որուն տրամադրութիւնը այն է, որ այս բնագաւառէն ներս սկսնակ ընկերութիւնները առաջին երեք տարին գերծ կը պահուին որեւէ տուրքէ: Ի պատիւ Հայրենի պետութեան կրնամ ըսել, որ այս ժամանակակից ու հեռատես օրէնքը շատ լաւ անդրադարձ ունեցաւ: Փաստօրէն վերոնշեալ 450 ընկերութիւններու 75ը վերջին երկու տարիներուն ծնունդ առին Հայաստանի մէջ, քաջալերուելով ճիշդ այս օրէնքէն:

Ս. Յ.- Դոկտ. Չօրեան ի՞նչ ունիք աւելցնելիք այս օգտաշատ հարցազրոյցին մէջ:

Ե. 2.- Վերջապէս, կ'ուզեմ հաստատել, թէ խորապէս կը հաւատամ, որ մեր ժողովուրդի յոյսն ու ապագան իր գիտակից, զարգացած ու արհեստագիտութեան լաւապէս տիրապետած հայ երիտասարդութիւնն է՝ որուն ապագային հաշույն որեւէ ներդրում կենսական է մեր ազգին գոյատեւումին համար:

Ս. Յ.- Դոկտ. Չօրեան, շնորհակալութիւն այս շատ շահեկան ու օգտաւետ հարցազրոյցին համար:



Սինոփսիս Արմինիայի աշխատանոցներէն տեսարան մը